

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

MIN-LANG (2025) 11

EUROPEAN CHARTER FOR REGIONAL OR MINORITY LANGUAGES

Summary of the sixth Report of the Committee of Experts on Armenia

adopted on 11 June 2025

Armenian language version

Գործադիր ամփոփում

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան Հայաստանում ուժի մեջ է մտել 2002թ.-ին: Ասորերենը, հունարենը, քրդերենը, ռուսերենը և եզդիերենը պաշտպանված են ինչպես II, այնպես էլ III մասերով, մինչդեռ գերմաներենը և ուկրաիներենը՝ միայն II մասով:

Մշտադիտարկման փուլում Հայաստանը մշակել է դպրոցների համար «Մշակութային բազմազանության» ծրագիր, որի նպատակն է խթանել հարգանքը տարբեր մշակույթների նկատմամբ և համագործակցությունը տարբեր էթնիկական ծագում ունեցող աշակերտների միջև: 2024թ.-ի ընթացքում ծրագիրը խթանել է երկրի շուրջ 170 դպրոցներում փոքրամասնությունների լեզուների դասավանդելն ու սովորելը՝ բաց դասերի, ներկայացումների, երգի ու պարի միջոցով: Բոլոր գրուցակիցները, որոնց խարտիայի փորձագետների կոմիտեի պատվիրակությունը հանդիպել է իր այցելության ընթացքում, հաստատել են այդ նախաձեռնության կարևորությունը, դրա ազդեցությունը, այդ թվում՝ նշանակությունը հայկական դպրոցների աշակերտների շրջանում իրազեկվածության բարձրացման առումով: Ծրագիրը նաև նպաստել է դպրոցների միջև կապերի ստեղծմանը կամ ամրապնդմանը:

Այնուամենայնիվ, իշխանության բոլոր մակարդակներում և ընդհանուր առմամբ փոքրամասնությունների լեզուներով խոսողների շրջանում դեռևս ցածր է իրազեկվածությունը խարտիայի վերաբերյալ: Ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների պետական ֆինանսավորման ծավալները տարիներ շարունակ անփոփոխ են եղել մինչև 2025 թվականը, երբ դրանք փոքր-ինչ ավելացել են:

Ռուսերենի և ռուսերեն լեզվով ուսուցումը շարունակվում է հասանելի լինել կրթական բոլոր մակարդակներում: Ամրապնդվել է փոքրամասնությունների լեզուների ուսուցումը տարրական և միջնակարգ դպրոցներում՝ քրդերենի և եզդիերենի համար, իսկ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցության շնորհիվ ուսումնական նյութերը հասանելի են անվճար: Մյուս կողմից, ասորերենի ուսուցումը շարունակվում է հասանելի լինել միայն ռուսալեզու տարրական և միջնակարգ դպրոցներում: Հունարենը չի դասավանդվում ո՛չ նախադպրոցական հաստատություններում, ո՛չ էլ տարրական և միջնակարգ դպրոցում: Գերմաներենը դասավանդվում է թե՛ տարրական, թե՛ միջնակարգ դպրոցներում, մինչդեռ ուկրաիներենը շարունակվում է դասավանդվել միայն կիրակնօրյա դպրոցներում: Շարունակաբար առկա է լեզվի որակավորված ուսուցիչների պակաս: Հայաստանում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողների ներկայացուցիչներն ընդգծել են համալսարանական մակարդակով ասորական, ուկրաինական և եզդիական ուսումնասիրությունների ամբիոններ հիմնելու և բոլոր պաշտպանված փոքրամասնությունների լեզուների ուսուցիչների վերապատրաստման համար հատուկ դասընթացներ կազմակերպելու անհրաժեշտության հրատապությունը: Անհրաժեշտ է նաև օժանդակել ուսուցման զգալի մասը փոքրամասնությունների լեզուներով կազմակերպող ավելի մեծ թվով նախադպրոցական հաստատությունների ստեղծմանը:

ՀՀ օրենսդրությունը դեռևս չի երաշխավորում փոքրամասնությունների լեզուները դատական իշխանությունների առջև օգտագործելու իրավունքը, այն դեպքերում, երբ փոքրամասնության լեզվով խոսողը տիրապետում է հայերենին: Սա շարունակում է չհամապատասխանել Հայաստանի կողմից վավերացված խարտիայի 9-րդ հոդվածին:

Համայնքների ասորի, քուրդ և եզդի ներկայացուցիչները հաստատել են, որ իրենց լեզուն կիրառվում է իրենց ժողովների ընթացքում քննարկումներում, ինչպես նաև, որ հնարավոր է ներկայացնել բանավոր դիմումներ: Ռուսերենի դեպքում առանձին համայնքներում հնարավոր է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հաղորդակցություն: Հունարենը իշխանությունների հետ շփումներում չի օգտագործվում: Որոշ համայնքներ ունեն պաշտոնական անվանում փոքրամասնությունների լեզուներով, սակայն չկա՝ ի լուրմ հայերեն անվանումների, այդ լեզուներով անունների օգտագործումը խթանող ընդհանուր քաղաքականություն կամ նախաձեռնողական մոտեցում: Ընթացիկ վարչատարածքային բարեփոխումը ներառում է մի շարք համայնքների միավորում ավելի մեծ համայնքների, ինչը կարող է բացասաբար ազդել փոքրամասնությունների լեզուների պաշտպանության վրա:

Հայաստանի հանրային ռադիոն շարունակում է հեռարձակել ծրագրեր ասորերեն, հունարեն, քրդերեն, ռուսերեն և եզդիերեն լեզուներով: Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ չկան փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ: Կան միայն ազգային փոքրամասնությունների մասին հայերենով տեղեկատվական հաղորդումներ: Հանրային հեռարձակման տիրույթում գերմաներեն և ուկրաիներեն լեզուների ներկայությունը դեռևս բավարար չէ: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը շարունակում է աջակցել, այդ թվում՝ ֆինանսապես, բոլոր ճանաչված փոքրամասնությունների լեզուներով ամենամյա հրապարակումներին՝ բացառությամբ գերմաներենի: Այնուամենայնիվ, օրաթերթեր կամ շաբաթաթերթեր հրատարակվում են միայն ռուսերեն լեզվով:

Փոքրամասնությունների համայնքներում մշակութային միջոցառումները, սեմինարները և ազգային տոնակատարությունները կանոնավոր բնույթ են կրում և ստանում են Հայաստանի կառավարության ակտիվ աջակցությունը՝ նաև ֆինանսական միջոցներով:

Ռուսերենը միակ փոքրամասնության լեզուն է, որը լայնորեն օգտագործվում է տնտեսական և սոցիալական կյանքում, և փոքրամասնությունների այլ լեզուների համար այս ոլորտում արդյունքների հասնելու նպատակով ավելի ռազմավարական և թիրախային մոտեցում է անհրաժեշտ:

ՀՀ իշխանությունները ներկայումս ավարտին են հասցնում Ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագիծը, ինչը խարտիայի փորձագետների կոմիտեի կարծիքով, կարևոր հնարավորություն է ընձեռնում փոքրամասնությունների լեզուների հստակ պաշտպանության և խթանման և, ի թիվս այլնի, համապատասխան օրենսդրությունը Հայաստանի կողմից խարտիայի համաձայն ստանձնած պարտավորություններին համապատասխանեցնելու համար:

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական

խարտիայի իրականացման մասին խարտիայի փորձագետների կոմիտեի

6-րդ զեկույցը հիմնված է 2025թ. մարտին Փորձագետների կոմիտեի «ի տեղվույն» այցելության ընթացքում տիրող քաղաքական և իրավական իրավիճակի վրա: